



«**أفيدار انيتش**» مجلة دينية شهرية يصدرها المركز التبشيري في بيروت  
 باللغة الارمنية. صاحبها ومديرها المسؤول القس صوثيل دوكتوريان.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

<i>Տեսիլք, Հոգիներու Փրկութեան Բեռնաւորում</i>	Ս. Յ. Փաշկեան
<i>և. Արթնութիւն</i>	
<i>Հոգեւոր Արթնութեան Աղօթքի</i>	
<i>Մխարանութիւն</i>	Վեր. Թէոտոր Պիլալիլեան
<i>Զարախօս Մանրուքը</i>	Ս. Ա. Զօլյանեան
<i>Երջանիկ Եմ</i>	Վեր. Ալեքս Աւետ
<i>Փրկութեան Յորելեանը</i>	Վեր. Ալեքս Աւետ
<i>Էմմանուէլ Աւետարանչական Դպրոցի Բացում</i>	Ս. Յ. Փ.
<i>Աստուծոյ Խօսքը</i>	Պատ. Ե. Ա. Թօրօ
<i>Իրական Պատմութիւն մը Սէնքիի</i>	
<i>Պատանեկութենէն</i>	Թրգ. Ս. Յ. Փ.
<i>Յուշեր</i>	Վեր. շան Մարգ
<i>Վկայութիւնս</i>	Շահօքամ Յովսէփեան
<i>Ծեր Սիմոնը</i>	Հովիւ
<i>Մօտ է Մահը</i>	Կրէյսի Գարօլլանեան
<i>Մեղաւոր Բարեկամներուս</i>	Սարգիս Յարութիւնեան
<i>1500 Հարցումներ</i>	(Շար.)

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԻԵՏԱՐԱՆԶԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ՊԷՅՐՈՒԹ**

«ԱԻԵՏԱՐԱՆԻՉ»Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Տէր և. Տնօրէն	Վեր. ՍԱՄՈՒԷԼ ՏՕՔԹՕՐԵԱՆ
Խմբագիր և. Թղթակցթ. պատասխանատու.	ՎԱՀԱՆ Մ. ԷՔՄԷՔՃԵԱՆ,
	ՄԱՆԱՍԷ ԳԱՔՐԻԷԼԵԱՆ
	և. ՍԱՄՈՒԷԼ ՓԱՇԿԵԱՆ

**Հասցէ՝ Rev. SAMUEL DOCTORIAN**

P. O. Box 4115, Beirut - Lebanon, Tel. 285957

«Աւետարանիչ»ի տարեկան բաժնեգինն է.—

ԼԻԲԱՆԱՆ — ՍՈՒՐԻԱ	5 Լ. Ո.
Ա. Ր Տ Ա Ս Ա. Հ Մ Ա Ն	2 ՏՈՂԱՐ

Բոլոր հաւասարեալ և Տէր պիտոյնք, որոնք կ'ուզեն այս գործին նպաստել,  
 կրնան իրենց նուէրները դրկել հետեւեալ հասցէներուն՝

ՈՐ. ԳՐՈՑ ԵՐԿԻՐՆԵՐ՝ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ —

**BIBLE LAND MISSION**  
**FIRST NATIONAL CITY BANK OF NEW YORK BEIRUT - LEBANON** Account No. 7457

Հիսփոսային Ամերիկայի և Գամասայի մէջ.—

**BIBLE LAND MISSION**  
**UNITED BANK MACON - MISSOURI**

Շնորհակալ ենք բոլոր անոնց որոնք մինչև այսօր մեզի օգնեցին Տէր օրհնել ձեզ:  
 ՍԱՄՈՒԷԼ ՏՕՔԹՕՐԵԱՆ

ՀԿԸ  
7102

## ՏԵՍԻԼՔ, ՀՈԳԻՆԵՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԲԵՈՆԱԻՈՐՈՒՄ ԵՒ ԱՐԹՆՈՒԹԻՒՆ



Վեր. Սամուէլ Տօքթօրեան Եւրօպայի գանադան երկիրներու մէջ Քրիստոսի Աւետարանը քարոզելէն վերջ Հոկտ. 20-ին Պէյրութ հասաւ հոգեկան մեծ բեռնաւորութիւնով մը՝ եւ դեռ տուն չդպցած՝ այցելեց Ամանոսի մէջ նոր կանգնած մեծ վրանը տեսնելու: Իր ուրախութիւնը անսահման էր, որ Տէրը առիթ մը եւս կը շնորհէր Աւետարանը պատգամելու հայոց եւ տեղացիներուն մէջ:

Հոկտ. 23-ի Կիրակի առաւօտեան Աւետարանչական Կեդրոնին մէջ իր առաջին քարոզը տուաւ, փառարանեց Տէրը «Էմմանուէլ Աւտուածաշնչական Դպրոցին» բացման եւ անոր տնօրէնին Վեր. Ժան Մարքիս համար ըսաւ. «Աստուած տարիներու տեսիլքս իրականացուց»:

Պատմեց թէ ինչպէս Կեդրոնի շարաթ զիշերուայ մէկ աղօթածոցովին մէջ արցունքներով աղօթեց նոր աւետարանիչներ պատրաստելու համար, յետոյ հաւատքով կլաւ տեղ մը փնտռելու, եւ թէ ինչպէ՛ս Տէրը զինք առաջնորդեց Լիբանանի նախկին Վարչապետին հաստատութեան, ուր՝ այսօր Փանուէլ մը եղած է եւ շատեր Աստուծոյ Խօսքը կ'ուսումնասիրեն, եւ որբեր կը պահուին: Սրտանց գովեց Տէրը բոլոր աշակերտներուն համար եւ աղօթեց որ անոնք ճիշդ Տէրովը ծրարքին համար պատրաստուին:

Ուրախութեամբ յիշեց թէ՛ մեծ վրանը 5 սիւներով կանգնուած է, փրկութեան կարօտ շատ հոգիներ կան, որոնք հոն առաջնորդուելու են, Տէրը մեզ մարդոց որսորդներ ընելու կանչած է. մեր աղօթքը այս է որ աղքատներ եւ հարուստներ, փոքրեր եւ մեծեր Աստուծոյ դռանն:

Յետոյ կարգալով Ա. Յովհ. Բ.րդ գլուխը շարունակեց իր խօսքը եւ ըսաւ. «Վրանի ժողովները եւ դայիք արթնութիւնը սրտիս մեծ նիւթ եղած է»: Ժողովուրդը եռանդով երգեց «Պատերազմինք

ՀԱՅ.ՍՍՐ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՅՈՒՆ. ԱՄՍՅՈՒՆ՝ ԵՐԿՐԱԿԵ  
1927

բոլոր ոյժով Քրիստոսի համար, հոգիներ շահինք Յիսուս Քրիստոսի» : Անկէ վերջ ջերմեանդութեամբ աղօթեց :

Ո՛վ Տէր, Քու Առունովդ եկած ենք հոս, գիտե՛նք եւ կը հաւատանք Քու Խօսքերուդ, հոս ներկայ ես, նոյն ատեն յարութիւն առած երկինջ մէջ ես, ամէն իշխանութիւն Քեզի տրուած է, մեր մէջ հրաշքներ գործած ես, մեր հոգիներուն մէջ կ'ապրես, վստահ ենք թէ խաւարը անցած եւ մեր սրտերուն վրայ Քու լոյսդ ծագած է, մեզ լուսոյ որդիներ ըրած ես, փառք Քեզի :

Կը խնդրենք Քեզմէ, ինչ հրաշքներ որ կատարեցիք ուրիշ երկիրներու մէջ, նոյնը հոս ալ ընես Պէյրութի մէջ եւ թող ամբողջ Լիբանանը արթննայ :

Թող այս առաւօտ մեզի համար պատրաստութեան պահ մը ըլլայ գիտակցելու մեր պարտականութիւններուն՝ որոնք շատցած են : Տէ՛ր, օգնէ մեզի, մանաւանդ ծառայիդ, դայն Սր. Հոգւովդ օձէ : Ամէն :

Յետոյ շարունակեց իր խօսքը .

Եղբայրնե՛ր, արթնութեան համար եկած ենք հոս, վրանը ատոր համար լարած ենք, Աստուած կ'ուզէ եւ կրնայ ընել, մեր կարողութիւններով չենք կրնար մարդիկ արթնցնել, Անոր Սր. Հոգին է որ այդ գործը պիտի ընէ : Մենք ալ ունինք սակայն մեր պարտականութիւնները, առանց անոնց՝ Աստուծոյ ձեռքը չչարժիր գործելու :

Արթնութեան ժամանակ Աստուած վարպետներն ետեւէն կը գործէ, եւ յետոյ երբ կը բացուի վարպետը, այն ատեն կը տեսնենք եւ կը հիանանք թէ արթնութիւնը սկսած է :

Այս անգամ կարծես իբր նոր քաղաք մը եկած եմ հոս՝ որպէս աւետարանիչ՝ գործելու, կ'աղօթեմ որ Աստուած Պէյրութի բնակիչներուն վրայ իրական արթնութիւն մը շնորհէ :

Մեր հովիւները արդէն կը ծառային երկու կեդրոններու եւ Փանուէլի մէջ. ես ալ իբր այցելու աւետարանիչ մը եկած եմ Տէրօջը Խօսքը պատգամելու :

Պէյրութ կայուն վիճակ մը ունի, Լիբանանի մասին եւրոպացւոց գաղափարը այն է թէ՛ Լիբանանը դրօսաշրջիկներու վայր մըն է, ուր շատ սրճարաններ եւ խաղափայլեր կան, եւ այլն. — Աստանան գրաւած է մեր երկիրը եւ իր գահը հոս հաստատած է, պէտք է տապալել Չարին աթոռը :

Լիբանանի մէջ սակայն Աստուծոյ Խօսքը խօսելու կատարեալ ազատութիւն կայ, որուն համար Աստուծոյ փառք տալու եւ Լիբանանի վարիչներուն համար աղօթելու ենք :

Իրլանտայի Պէտֆասթ քաղաքին մէջ երիցական պատուելի մը

բանտարկուեցաւ իր քարոզութեան մէջ մարդոց զանազան մեղքերը յիշելուն համար: Միայն իր կնոջ թոյլատրուած էր զինք տեսնելու: Բանտին մէջձօ օր մնալու էր, միայն այն ատեն կրնար ազատ ըլլալ եթէ խոստանար որ այդպէս պիտի չքարոզէ, եւ ինք ստոր չյօժարեցաւ: Աստուած առիթ մը շնորհեց ինձի որ այցելեմ այդ քաջ հովիւրը. բանտին մէջ երկար ժամանակ խօսեցանք եւ աղօթեցինք, հոն Աստուծոյ ներկայութիւնը զգացինք, բանտապահ ոստիկանը շատ ազդուելով մեզի թոյլատրեց որ աւելի խօսինք եւ աղօթենք: Ոստիկանը վկայեց թէ «Այդ պատուելիին պէս ուրախ անձ մը երբեք տեսած չէ»: Երբ մէկը կը բանտարկուի Քրիստոսի համար, իր սէրը կ'աւելնայ Փրկչին եւ անմահ հոգիներուն հանդէպ: Յաւալի՛ է ըսել թէ՛ մենք հաւատացեալներս հոս ունեցած մեր այս ազատութիւնը կը կաշկանդենք, անոր համար Սատանան սկսած է դործել, յարձակելով եկեղեցիներու վրայ (կրանի թէ միայն յարձակէր) հապա ներս մտնելով շատերը վիրաւորած, կապած, եւ կաշկանդած է մեղքի շղթաներով (թէպէտեւ չեն դիտեր): Սրտիս միակ տանջանքը այս է որ Աստուած շուտով եկեղեցիները ազատէ այս խղճալի վիճակէն եւ հողերո ազատութիւն, միաբանութիւն եւ սէր շնորհէ:

Մերկի բարեկամներ, այսպիսի ազատ երկրի մը մէջ ապրիլնիս շնորհք է շնորհք, մեծ շնորհք, ուր՝ կրնանք ամէնուն կենաց Խօսքը խօսիլ: Օղտագործեցէք այս առիթները:

Այսօր՝ մեր ոխերիմ թշնամին Սատանան եկեղեցիներու բեմերուն վրայ նստած է, կարծելով թէ անոնք իրեն կը պատկանին եւ աւերներ կը դործէ Աստուծոյ զաւակներուն մէջ:

Երէկ զիշերուայ աղօթածողովին մէջ հաւատացի թէ Աստուած այդ ազատութեան կայծը սկսած է եւ պիտի տարածէ հեռուները. եւ մեր թշնամին՝ Սատանան պարտութեան պիտի մատնէ:

Արթնութեան մը համար կարեւոր բանը տեսիլք ունենալն է, եկեղեցի մը երբ իր հոգեւոր տեսիլքը կը կորսնցնէ, չկրնար դործածուիլ Աստուծոյ ձեռքին մէջ: Զօրաւոր եւ ներքին տեսիլք մ'ունենալու է: Դուն այս տեսիլքը ունի՞ս, թէ ոչ՞ ամպ մը ծածկած է քեզ Աստուծմէ եւ չես կրնար տեսնել:

Տեսիլք եւ կոչում ունեցող հաւատացեալներուն յարաբերութիւնը Աստուծոյ հետ մտերմիկ կ'ըլլայ, այդ ժամանակ միայն անոնք կրնան յստակ կերպով տեսնել զժողքն ու երկինքը եւ հասկնալ հոգիներուն արժէքը: Այն ատեն է որ մեղաւոր մարդոց հոգիներուն փրկութեան սէրը կ'աւելնայ:

Արթնութիւն մը ակնկալելու առաջին պայմանը ուստի աստուածատուր տեսիլք մ'ունենալն է: Մարդոց հոգիներուն արժէքը

դիտնալ եւ զանոնք Աստուծոյ աչքով տեսնել է, թէ ինչո՞ւ եւ ի՞նչ նպատակի համար ստեղծուած են անոնք :

Աստուած է որ տեսիլքը կուտայ եւ զայն կ'իրադրծէ, զբամով զայն շնա կրնար դնել եւ ոչ ալ գրքեր կարգալով՝ զտնել :

Խոնարհութեամբ եւ աղօթքի հողիով Իր առջեւ կենալու ենք որ Ինք մեզի յայտնէ զայն : Արթնութեան համար հողիներու փրկութեան բեռնաւորում ունենալու եւ գթութեամբ լեցուն սիրտ մը կրելու ենք, առանց այս ծանրաբեռնաւորման կարելի չէ սեւէ արթնութիւն ակնկալել :

Տէրով Սբ. Հոգին է որ մեզ կ'արթնցնէ եւ հողիներու ծանրութիւնը մեր վրայ կը դնէ, այն ատեն մեղաւորները Տէրովը առաջնորդելու մասնաւոր սէր եւ գութ կ'ունենանք մեր սրտերուն մէջ եւ արցունքներ՝ մեր աչքերուն մէջ :

Դուք՝ հայրեր եւ մայրեր, չէք կրնար ձեր զաւակները շահիլ եթէ զանոնք չսիրէք. եթէ դուք Աստուծոյ ուղածին պէս անմահ հողիներու փրկութեան ծանրութիւնը ձեր հողիներուն մէջ չզղաք եւ ձեր աչքերէն աղի արցունքներ չհոսին, չէք կրնար անոնց հողիներուն դպչիլ, բայց երբ Աստուծոյ առջեւ խոնարհելով կ'ազատակէք Անոր՝ այն ատեն Տէրը պիտի դործէ եւ հողիները շարժէ :

Մենք այսօր արթնութեան սահմանին մօտեցած ենք, կը հաւատամ որ Տէրը մեծ բաներ պիտի րնէ :

Լոնտոնի մէջ այսօր արթնութիւն մը սկսած է եկեղեցիի մը մէջ, եւ երթալով կ'աւելնայ :

Ասիէ երեք տարի առաջ այցելեցի այդ եկեղեցին, փոքրիկ սրահ մըն էր, եկեղեցւոյ պաշտօնականներէն խնդրեցի որ ժամանակ մը դործածենք զայն Աստուծոյ Խօսքը քարոզելով, թոյլատրեցին : Առաջին ժողովէն վերջ պատուելին տեսայ եւ ըսի թէ «Ինչո՞ւ չկար ժողովին» : Ըսաւ. «Զիտ չհրաւիրեցին» : Ըսի իրեն «Նկիւ՛ւր, թերեւս սխալ բան մը կը խօսին», եկաւ, արթնութիւնը սկսաւ եւ եկեղեցւոյ դործունէութիւնը տարածուեցաւ :

Երբ Տէրը արթնութիւն մը շնորհէ մեզի, Փանուէլի եւ Կեդրոններուն նիւթականն ալ կը հայթայթէ : Մեզ դործի մղող բոլոր ուժը, նպատակը եւ շարժառիթը պէտք է ըլլայ մեր սէրը Քրիստոսի հանդէպ. եթէ մենք բոլորս այդ անկեղծ սիրով աշխատինք Աստուած պիտի օրհնէ մեզ առատօրէն եւ մեր բոլոր պիտոյքները պիտի լեցնէ : Առանց մեր կողմէն եղած զոհողութեան Աստուծոյ ձեռքերը չեն շարժիր եւ դործեր, Աստուած կ'ուզէ տեսնել մեր անձուիրումը :

Այս սուրբ դործին համար արդեօք որքա՞ն դին կը վճարենք, (խորհուրդս միակ նիւթականը չէ) : Արդեօք կրնա՞նք այս օրերուն

մէջ մեր առանձնական աղօթքները աւելցնել, քառորդը կէս ժամի փոխել, կրնա՞նք քառորդ ժամ աւելի շուտ արթննալ եւ աղօթել վրանին մէջ եղած ժողովներուն համար: Այո՛, Աստուած պիտի վարձատրէ եւ հոգիներ փրկէ կթէ՛ մեր ժամանակէն, դրամէն կը զոհենք Իր գործին համար:

Կ'արժէ որ այս օրերուն քիչ մը պակաս շահինք եւ հոգիներ վաստակինք Յիսուսի:

Այս գալիք օրերուն ժամանակ տանք աղօթքի եւ ծոմապահութեան, մեր ընտանեկան պաշտամունքներուն մէջ Աստուծոյ առջեւ Եզրասի պէս երեսի վրայ իյնանք եւ արցունքներով աղաչենք Տէրը՝ մէն որ ողորմի մեր ազգին երիտասարդ-երիտասարդուհիներուն:

Արթնութեան պայմաններէն մէկն ալ հաւատացեալներու միաբանութիւնն է որ սիրով ի գործ կը դրուի, երբ Աստուած այս եւ ասոր նման հոգեւոր առաքինութիւններ կը տեսնէ մեր վրան Իր Սբ. Հոգին պիտի թափէ, մեղաւորները պիտի յանդիմանէ եւ կը համոզէ մեղքի, արգարութեան եւ դատաստանի համար, եւ զանոնք ծունկի պիտի բերէ, Չար Սատանան ալ պարտութեան պիտի մատնէ եւ բոլոր աշխարհ պիտի լսէ թէ Տէրը մեծ բաներ (հրաշքեր) ըրաւ Լիբանանի մէջ:

Թող Աստուած այս բացասիկ արթնութիւնը մեզմէ սկսի:

### ՈՎ Տէր.—

Երբ կը տկարանանք այն ատեն զօրաւոր կ'ըլլանք եւ դուն այն ժամանակ գործի կը սկսիս:

Ո՛վ Եղիայի Աստուածը քեզի պէտք ունինք, կրակովդ իջիր մեր վրայ, եւ մեր հոգիներուն մէջ տեսիլք, հաւատք, բեռնաւորում եւ արթնութիւն չնորհէ: Կը հաւատամ Տէ՛ր, որ պիտի ընես: Տուր մեզի այն մեծ հաւատքը որ հաւատանք թէ արթնութիւնը սկսած է արդէն մեր մէջ:

Տէ՛ր, զիս աւելի մօտ քաջէ քեզի եւ իրը մաքուր աման մը գործածէ հոգիներու փրկութեան համար, նմանապէս իմ գործակիցներս ու եղբայր քոյրերս: Պատուական անունովդ կը խնդրեմ. Ամէն:

Այս աղբեցիկ պատգամէն վերջ «Անձրեւներ օրհնութեան» երգով վերջացաւ ժողովը:

## ՀՈԳԵՒՈՐ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔԻ ՄԻԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Այս հոգեւոր արթնութեան էական սկզբունքները հարցումի ձեւով դրուած են:—

Որոնք որ կ'ուզեն ստորագրել զայն անդամ կը լինեն:—

1.— Աղօթո՞ւմ ես որ Հոգեւոր Արթնութիւն մը զայ, նախ քու կեանքում, եւ քու գործակիցներուդ կեանքում — եւ եկեղեցիին մէջ:

2.— Փափաքելով փափաքո՞ւմ ես որ քո կեանքում եւ քո ծառայութեան մէջ Սր. Հոգու աւելի մեծ գորութիւնը երեւան զայ, եւ համոզուել՝ ես որ առանց ստոր չես կարող քո գործը շարունակել:

3.— Պիտի աղօթե՞ս որ այդ վերջին օրը Քրիստոսի առջեւ ամօթով չլինես:

4.— Կը հաւատա՞ս որ այս հոգեւոր արթնութիւնը ձեռք ձգելու համար ամենազղեցիկ միջոցը աղօթքն է:

5.— Յօժա՞ր ես, ամէն օր, դէթ կէս ժամ յատկացնես հոգեւոր արթնութեան աղօթելու (յանձնարարելի է կէսօրից յետոյ, որքան շուտ որ կարելի է) եւ յօժա՞ր ես աղօթել մինչեւ որ արթնութիւնդ զայ:

(Հոս կրնաք ստորագրել)

Աղօթող ձան Հայտ եւ աղօթակից ընկերք, այս հինգ բաները ըրին:—

1.— Յիսուսի Խօսքին համաձայն (Մատթ. 9. 37-38) ճերմըկ-ցած դաշտերուն նայեցան:

2.— Յետոյ յոյն ու հաւատքը հաստատեցին Աստուծոյ անփոփոխելի մեծ խոստումներուն վրայ որ Աստուծաշունչին մէջ դրուած են:

3.— Համոզուած էին որ, Աստուծոյ Խօսքին քարոզութեան հետ նաեւ մեր առաջին գործը աղօթել է հոգեւոր արթնութիւն ձեռք բերելու:

4.— Այս կէտերու համոզուած ըլլալով, իրենք զիրենք, զիտակցօրէն, որոշապէս, եւ հաստատ վստահութեամբ մը գործի նետուեցան:

5.— Յարատեւելով այս Հոգեւոր պայքարը յառաջ մղեցին եւ շարունակեցին մինչեւ որ ակնկալեալ հոգեւոր արթնութիւնը ձեռք բերին:

## ՉԱՐԱԽՍՍ ՄԱՆՐՈՒՔԸ

Հիմա հոս որ զիս կը տեսնէք եկեղեցւոյ պնակին մէջ, պղտիկ եւ գրեթէ անարժէք հինգ զուրուշնոց մը, ես պատիւը ունեցայ մի քանի օրեր բնակելու մեծարժէք մուշտակէ շինուած գրամապանակի մը մէջ: Հոն ընկեր եղայ, հինգ, տասը, յիսուն, եւ հարիւր լիրանոց թղթադրամներու:

Յիսուն զուրուշնոց մտերիմ ընկեր մը ունէի, զոր տէրս անխղճօրէն դաշն ինձմէ դատելով՝ իր նոր հագուստը բերող գերձակի աշակերտին նուէր տուաւ: Օր մը, քիչ մնաց որ զիս ալ քշեր իր քովէն: Սափրիչին դացած էր, մազը կտրել տալէն յետոյ, նախ զիս իր հագուստը խողանակող պատանիին տալ ուղեց իրրեւ ընձեռոյթ (պախշիչ) սակայն ամչնալով զիս իմ տեղս հանդիստ թողելով՝ տասը զուրուշնոց մը հանելով տղուն տուաւ:

Անցեալ օր տէրս, մի քանի ընկերներով ծաղարան մը մտաւ, հոն ղովացուցիչ խմելէ յետոյ, մեկնելու պահուն, ուղեց սպասեակին ընձեռոյթ մը տալ: Երբ ձեռքը գրամապանակին խոթեց՝ զիս վերցուց, սակայն վախնալով որ զինք ալ կծծիներու ցանկին դասէին, ետ դրաւ զիս եւ նոր հրապարակ ելած քսանհինգ զուրուշնոց մը հանելով՝ տուաւ անոր:

Այս առտու, երկար ճամբորդութենէ մը վերջ, երբ չողեկառ-

---

Արդեօք քո մտքում ասո՞ւմ ես, այս շատ մեծ ծրագիր մըն է:

Յիշէ՛ Վիլիամ Քէրիի այս նշանաւոր խօսքերը.—

«Աստուծոյ համար մեծ բաներու ձեռնարկէ, Աստուծմէ մեծ բաներ ակնկալէ»:

Հոգեւոր արթնութեանը առաջին աստիճանի փորձառու ուս-վիրաներէն մէկը Չարլզ Փինի ասում է.—

«Որեւէ համայնքի մէջ Հոգեւոր Արթնութիւն կրնայ ձեռք բերուիլ, երբ նուիրուած — ճանճէղայի — հոգիներ — հերոսաբար պայքարին մէջ նետուիլ ուխտած լինելով թէ կամ յաղթանակը տանիլ կամ ալ մեռնելու պատրաստ են — եթէ պէտք լինի — յաղթանակը տանիլ եւ մեռնիլ»:

Մեր Տէրն ալ ասեց «Երկինքի թաղաւորութիւնը ոյժով կ'առնուի — եւ ոյժակները (ճէպպարլար) կը յափշտակեն զանիկա»:

Վեր. ԹԷՆՏՈՐ ՊԻԻԼՊԻԻԼԵԱՆ

քէն պիտի իջներ, ուղեց նուէր մը տալ սենեկապանին: Իր քովը միակ մանրուք դրամ եւ մնացեր էի, եւ սկսայ դողալ, այն մտափախու-թիւնով՝ որ իմ փառաւոր բնակավայրէս պիտի զրկուէի փոխադրու-լով՝ ուրիշ անապահով վայր մը: Տէրս ալ սկսաւ մտահոգուիլ: Ետև-բաժնի ինչ ընելիքը չէր գիտեր: Ամենէն պղտիկ դրամը մէկ լիբանոց մըն էր (ինձմէ գաս): Վերջապէս լսեցի որ ինքնիրենը կ'ըսէր. «Ո՛չ, անկարելի է, ինչպէս չ'ինդ դուրուչ տամ մարդուն, որ բոլոր ճամբոր-դութեանս ընթացքին ինձի այնքա՛ն հոգ տարաւ» եւ հանեց մէկ լի-բա նուէր տուաւ անոր, որպէսզի իր վրայէն «տառտաճեոն» ի մակ-դիրը չի վերնայ:

Այս գիշեր, եկեղեցի գացի իր հետը, երբ պնակը կը շրջեր, ինձմէ ազատելու յարմարագոյն առիթը եկած համարելով, քսակէն դուրս հանեց զիս ուշադրութիւնով, որ ձայն չի հանեմ ուրիշներուն հետաքրքրութիւնը իր վրան չի հրաւիրելու համար եւ մասերուն ծայրովը կամայցուկ մը զիս սահեցուց պնակին մէջ եւ մէկ անգամ ընդ միշտ ազատեցաւ իմ խոցող ներկայութենէս: Հակառակ որ այդ պահուն ինձի կ'ընկերանային տասը, քսանհինգ եւ յիսուն դուրուչ-նոցներ, սակայն ես, անոնցմէ ամենէն փոքրը ըլլալուս զիս դրաւ պնակին մէջ, իբրև իր շարժական հոգեւոր տուրքը, որպէսզի եկե-ղեցին անով կարենայ հովիւ պահել, վարձքի, լուսի եւ ջուրի դրամը վճարել: Այդ դրամէն նաև դոնապանին ամսականը տալ: Հոգեւոր ամսաթերթեր, զրքեր, թերթիկներ գնել եւ հրատարակել, բացօդեայ ժողովներ ընել, աւետարանիչներ եւ միսիոնարներ զրկել եւ մնացած բոլոր ծախսերը հոգալ . . . :

Սպաներէնէ քարգմ. Ս. Ա. 2.

Յ. Գ. — Սոյն գրութիւնը քէպտո երեւակայական հանգամանք ունի, սակայն իր մէջ մեծ նշմարտութիւն մը կը պարունակէ: Եթէ մենք՝ հաւատացեալներս Աստուծոյ գործին լայն բանակ մեր քսակ-ները՝ հրաշքներ կրնան կատարուիլ: Աստուծոյ գործին կազալուն պատճառներէն մին առոր մէջ փնտռելու է: Այսօր, Ծարաք-ապահ-ներ, Ռըսըլականներ, Մօրմոններ, Քրիսչըն Սայէնսներու պէս մոլոր վարդապետութիւններ ինչ հսկայ գործեր կը կատարեն: (Թէպէտ կործանիչ) Իրենք տասանորդ կը վնարեն: Իսկ մենք որ հիմնապաշտ եւ ողջամիտ վարդապետութեան հետեւողներ ենք ըսելով կը հպար-տանանք՝ տալու մէջ որքան ետ մնացած ենք: Տէրոջը տուածէն տանք փրկիչներ եւ առատ տանք: Տէրը պարտական չի մնար եւ առատօրէն կը վարձատրէ մեզ ուրեմն տալով գործակցիմք Անոր:

Ս. Ա. 2.

## ԵՐՋԱՆԻԿ ԵՄ

Ճշմարիտ, նշմարիտ կ'ըսեմ քեզի, չես կրնար ըլլալ երջանիկ  
փանի կ'ապրիս մեղաց մէջ .

Բայց երբ դառնաս Յիսուսի, եւ փրկուիս ստանաս,  
Կրնաս ըլլալ դուն երջանիկ, ինծի պէս :

ԽՄԲ . Երջանիկ եմ, երջանիկ, երջանիկ եմ ամէն օր,  
Երջանիկ եմ ես :

Երջանիկ եմ, երջանիկ, երջանիկ եմ ամէն օր,  
Երջանիկ եմ Բրիստոսով այսօր :

Երբ հին կեանքիդ բաներն անցնին, բոլոր բաներն ալ նորագուին,  
Երբ դուն ըլլաս կենդանի գոհ, ու մկրտուիս Հովով, Սրբով,  
Կրնաս ըլլալ դուն երջանիկ, ինծի պէս :

ԽՄԲ .

Երբ Սուրբ Գրքին դուն հաւատաս, անոր խոստմանց ալ տիրանաս,  
Եթէ Տէրն բոլոր սրտովդ սիրես, եւ ընկերդ ալ քու անձիդ պէս,  
Կրնաս ըլլալ դուն երջանիկ, ինծի պէս :

ԽՄԲ .

Երբ յանձնուիս Տէր Յիսուսին, Անոր արեամբ յաղթես մեղքին,  
Երբ քու Փրկչիդ ըլլաս վկայ, ու մեղաւորն Անոր բերես,  
Կրնաս ըլլալ դուն երջանիկ, ինծի պէս :

ԽՄԲ .

Երբ սիրտդ սուրբ ու մաքուր է, եւ Յիսուս քու Թագաւորն է,  
Երբ դուն կենաց նախնուն մէջն ես, եւ Աստուծոյ հետ կը քալես,  
Կրնաս ըլլալ դուն երջանիկ, ինծի պէս :

ԽՄԲ .

ՎԵՐ . ԱԼԷՔՍ ԱԽԵՏ

### Խ Մ Բ Ե Ր Գ Մ Ը

«Ո՛վ մեղաւոր», բեռնաւորուած եւ յոգնած,

Նկուր ինծի, մեր Տէր Յիսուս կը կանչէ :

Նոր կեանք, նոր սիրտ, հեզ եւ խոնարհ, դուն առած՝

Կրնաս խաղաղ ապրիլ, ազատ մեղքերէ :

ՎԵՐ . ԱԼԷՔՍ ԱԽԵՏ

## ՓՐԿՈՒԹԵԱՆՍ ՅՈՒԵԼԵԱՆՆՈ

Յոբելեան, մեծ յոբելեան, յիսնամեակ ազատութեան,  
Ազատուած մեղփին լուծէն, եւ սատանա՝ չար իշխանէն,

Որ փրկութիւն շնորհեց ինծի :

Յոբելեան, մեծ յոբելեան, յիսնամեակ մեծ յաղթութեան,  
Յաղթութիւն սուրբ հաւատով, եւ Սուրբ Հոգւոյն զօրութիւնով :

*ԽՄԲ.* Որ փրկութիւն շնորհեց ինծի :

Յոբելեան, մեծ յոբելեան, յիսնամեակ մեծ օրհնութեան,  
Օրհնուած տունով, բարի, հաստատուած վըրան ժայռի :

*ԽՄԲ.* Որ փրկութիւն շնորհեց ինծի :

Յոբելեան, մեծ յոբելեան, յիսնամեակ երջանկութեան,  
Երջանիկ սրտովս փախմ, դէպ երկնային տունն լուսեղէն :

*ԽՄԲ.* Որ փրկութիւն շնորհեց ինծի :

*Ասիկա իմ փրկութեանս 50րդ տարեդարձի երգն է :*

*ՎԵՐ. ԱԼԷՔՍ ԱԻԵՏ*

### Փ Ա Ռ Ք Ա Ն Ո Ր

Շղթայակապ, մեղփին գերի,  
Երկար ատեն եւ բանտն էի,  
Ազատութեանս օրը հասաւ,  
Յիսուսն եկաւ, դուռը բացաւ,  
Դուրս հանեց զիս, փրկեց հոգիս,

Փառք, փառք, փառք Անոր :

*ՎԵՐ. ԱԼԷՔՍ ԱԻԵՏ*

## Է Մ Մ Ա Ն Ո Ւ Է Լ Ա.ՍՏՈՒԱԾԱՇՆՁԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱՅՈՒՄ



Էմմանուէլի Աստուածաշնչական Դպրոցի աշակերտներ՝  
աղօթքի պահում (ՓԱՆՈՒԷԼ)

Տէրոջ շնորհքով Սեպտ. 27-ին, Երեքշաբթի իրիկուն Սաղէմի Աւետարանչական Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ «Էմմանուէլ Աստուածաշնչական Դպրոցի» բացման եւ աշակերտներու նուիրման ժողովը. ժողովուրդը մեծ եռանդով «Լոյս Գրիչ» եւ «Կորսուածները Ազատէ» երգերը երգեց. Գրիգոր Եղբ. Պետրոսեան աղօթեց :

Պատ. Ալբաճաճի ուրախութիւն յայտնեց այդ ժողովին համար, նոյն ատեն ցաւով յիշեց Վեր. Տօբթօրեանի բացակայութիւնը, ըսելով. «Անիկա ներկայիս Եւրոպայի մէջ աւետարանչական ժողովներով զբաղած է, իր կամքէն անկախ պատճառներով չկրցաւ ներկայ ըլլալ այս ժողովին՝ որուն համար միշտ կ'աղօթէր ու կը դործէր» : Վեր. Է. Էմմաճեան «Սօսքն է ձրազ իմ Ոտքերուս» երգը սորվեցուց ժողովուրդին :

Պատ. Ժան Մարք Մատթէոսի 9 : 35-38 համարներէն կարդաց եւ «Հունձքը շատ է ու մշակները քիչ» նիւթին շուրջ խօսեցաւ : «Յիսուս աւետարանիչ էր, երկիրքէն երկիր եկաւ որ Աւետարանը քարոզէ. Անոր սրտին վրայ ծանրացած նիւթը հողիներու փրկութիւնն էր եւ ամէն ով որ ասիկա իր սրտին մէջ ունի, Աստուծոյ Հողին ունի, եւ անոնք որ այս դործին համար կ'աղօթեն՝ Սբ. Հողիէն է որ կը

դերդուին: Հետեւաբար, բոլոր Աստուծոյ զաւակներ կրնան այս գործին մասնակցիլ. ներկաներ թող իրենց սրտին մէջ ունենան այս նուիրական դործը եւ որոշեն թէ պիտի աղօթեն այս դպրոցին համար: Դեռ շատ հունձք կայ, մեր ազգին մէջ շատեր կան որ պէտք է փրկուին, որուն համար աղօթելու ենք»:

Շարունակելով իր խօսքերը, պատմեց իր դործունէութիւնները հեռաւոր երկիրներու մէջ, թէ ինչպէս Սր. Գրոց դպրոց մըն ալ բացած է Պաքուի մէջ եւ Աստուած շատ օրհնած է աշակերտները:

Նկարագրեց թէ Աստուած ինչ կերպով եւ ճամբաներով զինքը համոզեց որ հոս մնայ եւ այս դպրոցը սկսի, պատմեց իր եւ Պօյաճեան Եղբոր ճամբորդութիւնը, իրենց հիւանդութիւնները, մեռնելու վտանգները եւ բժշկուելը:

Յիշեց թէ՛ «Այս դպրոցին մէջ ծառայելով ուրիշ խմբակներու դէմ պիտի չպայքարիմ, այլ Տէրոջմով պիտի ջանամ որ անոնք իրարու միանան եւ մէկ եղբայրութիւն կազմեն: Տէրոջ խօսքերով բոլոր աշակերտներուն պիտի ներշնչեմ որ Ամէնը սիրեն եւ առանց կողմնակցութեան աշխատին: Տէրը միշտ միութեան կողմն է, երանի թէ բոլոր եղբայրները միանային եւ մէկ ճակատ կազմէին»:

Յետոյ, Աւետարանին մէջ գրուած Սր. Գրոց Դպրոցի պայմաններուն մասին խօսեցաւ: Եւջտեց թէ Աւետարանիչին գործը դիւրին գործ մը չէ, Աւետարանիչը իր յոյսը ոչ մէկ խումբի կամ անձի վրայ դնելու չէ, այլ միայն Աստուծոյ վրայ: Յիշեց թէ կեանքիս մէջ ոեւէ մէկ ատեն ամսականի խօսք չեմ ըրած, ինձի որքան որ որոշած են ընդունած եմ: Աւետարանիչը պէտք է նուիրուած ըլլայ, եթէ անօթի ալ մնայ դարձեալ Աւետարանը քարոզելու է: Վկայեց թէ իր քաջած տառապանքներուն մէջ իսկ Տէրը չնորհքով քաջարար քարոզած է. Աւետարանը երբեք կապուած չէ, ուր որ երթաս մարդ կայ, եւ կրնաս պատգամել Աստուծոյ Խօսքը:

Ձանազան երկիրներու մէջ Աստուածարանական դպրոցներ շատ կան, մէկը բարձր ուսում ունենալու է որ դպրոց ընդունուի, եւ ուսման մասին ոեւէ խօսք չեմ ըներ: Այս դպրոցը ուսում չունեցողներու համար ալ է: Ի՞նչ հիման վրայ է արդեօք որ այս քայլը կ'առնենք:

Յիսուս՝ մեր Տէրը ձկնորսներ ընտրեց, բարձր դասակարգէ մարդիկ չընտրեց, մաքսաւորը՝ ամենացած Մատթէոսը կանչեց, արդեօք Յիսուս սխալեցա՞ւ:

Այսօր Աստուածարանական ճեմարաններու մէջ ի՞նչ կը սորվեցնեն, աշակերտներ այդ անուս ձկնորսներու մասին կը սորվին որ վկայական առնեն: Եթէ այսօր Պետրոս դար, այդ դպրոցներէն ներս պիտի չընդունուէր:

Ժան Մարք եղբայրը պատմեց Յովսէփ եղբայր Չաքարեանի  
ևւ ուրիշ անուս հովիւի մը մասին որոնք Տէրոջը ձեռքին մէջ զորա-  
ւոր կերպով զործածուած եւ օրհնութիւն եղած են շատերու :

Այս բաները պատմելով ըսել չեմ ուզեր թէ ուսում ունենալու  
չէ, ո՛չ, Տէրը այդպիսիներն ալ զործածած է (եթէ խոնարհ ըլլան) :

Ներկայիս 3 ամսուայ դասընթացք մը պիտի ունենանք, եւ  
պիտի տեսնենք թէ որոնք Աւետարանը քարոզելու կոչումը ունին,  
եթէ չունին կրնան իրենց զործերուն երթալ, ատիկա իրենց համար  
օգտակար պիտի ըլլայ :

Յետոյ աշակերտներ ոտքի կեցան, երգուեցաւ «Օ՛ն ի զործ»  
կրգը :

Անկէ վերջ խօսք առաւ Վեր. Էլմաճեան, եւ ըսաւ. «Այսօր  
Աստուծոյ Խօսքին սովը կը տիրէ շատ մը երկիրներու մէջ» : պատմեց  
երկու դէպքեր, թէ ինչպէս եկեղեցի յաճախողներ խակ Աստուծոյ  
Խօսքին ճշմարտութենէն զուրկ մնացած են : Ըսաւ. «Պէտք ունինք  
պարզ եղբայրներու որոնք Սր. Գիրքը սորվեցնելու են» :

Սարգիս եղբ. Գասարճեան վկայեց թէ ինք այդ անուս աշա-  
կերտներէն մէկը եղած է, հաղիւ նախակրթարան աւարտած է, բայց  
Տէրը զինքը զործածած է եւ կը զործածէ, վկայեց թէ ամէն օր Սր.  
Գիրքը կը կարդայ, եւ Անոր հմուտ եղած է, ցաւ յայտնեց բոլոր ա-  
նոնց որոնք Աստուածաշունչը չեն կարդար եւ սերտեր :

Անկէ վերջ Պօյաճեան եղբայրը խօսեցաւ : Յիշեց թէ եղբայր մը  
Աստուածարանական Դպրոցը աւարտելէն եւ վկայականը առնելէն  
վերջ հարցուցած է իր տնօրէնին. «Հիմա որ քարոզելու պիտի եր-  
թամ, ե՞րբ Սր. Գիրքը պիտի սորվիմ» : Այս դպրոցին մասին խօսե-  
լով ըսաւ. «Կը հաւատամ որ Աստուած այս նուիրուած եղբայրներուն  
միջոցաւ մեծ զործեր պիտի ընէ» : Մովսէս 12 լրտեսներ զրկեց, ա-  
նոնցմէ 10 հոգին այնպիսի դէշ լուրեր բերին որ ժողովուրդը մեծ  
ճայով լացաւ եւ ըմբոստացաւ : Յետու եւ Քաղէր քաջալերեցին ժո-  
ղովուրդը եւ ըսին. «Եթէ Տէրը մեզի հաճի, մեզ այն երկիրը պիտի  
տանի, եւ զանիկա մեզի պիտի տայ, որ կաթ ու մեղր բոլորով երկիր  
մըն է» : Թուոյց. 14 : 8 :

Տէրը այս ծառաներուն միջոցաւ ալ մեծ բաներ պիտի ընէ ու  
եթէ Տէրը ՄեՁի ՀԱՃի :

Յիտուս ըսաւ. «Ես միշտ Անոր հաճելի եղած բաները կ'ընեմ» :  
Մենք ալ եթէ զինք հաճեցնենք, պիտի ժառանգենք երկիրը, ՀՈԳԻ-  
ՆԵՐ ՊԻՏԻ ՇԱՀԻՆՔ ՏԵՐՈՋԸ :

Աստուծոյ Խօսքին, տարածման համար պիտի աղօթենք. Տէրը  
որհնէ զիրենք առատօրէն :

Յետոյ Պատ. Ռըչտի Մարկոս արարերէն լիզուաւ խօսեցաւ

և և Պատ. Հապիպ թարգմանեց: Ի՞նչ ըսել է Աստուծոյ ծառայել և ինչպէս կարելի է զԱստուած հաճեցնել: Բացատրեց թէ այս ամէնը կ'ըլլայ զուհոյութիւնով, անձնուրացութեամբ և պատրաստութեամբ:

Բարձր նիշեր առնելէ աւելի հոգեւոր գործերու յաջողութիւն մաղթեց բոլոր ուսանողներուն: Ժողովի վերջաւորութեան Ժան Մարք եղբայրը կարգաց և բացատրեց Ելից .33. 14-15 համարները, ըսաւ. եթէ քու ներկայութիւնդ մեղի հետ չերթայ, մեղ ասկէ մի հաներ, հրեշտակ չենք ուզեր, միայն քեզ կ'ուզենք Տէր, Դուն ամենակարող ես, եթէ մարդկային է այս գործդ մի՛ սկսիր, եթէ Քու սուջեւ շնորհք դասնք, հաստատէ դայն:

Էմմանուէլ զբաժ ենք այս զպրոցին անունը, որ կը նշանակէ. «ԱՍՏՈՒԱԾ ՄԵՁԻ ՀԵՏ է»: Տէրով ներկայութեան մէջ միայն այս գործը կրնայ յառաջ երթալ:

Ուստի Անոր կամքին համաձայն ապրինք, գործենք և սուրբ կեանք մը վարենք:

Դարձեալ աշակերտներ ոտքի ելան, անոնց համար Տ-ը եղբայրներ և քոյրեր աղօթեցին:

Նուիրման այս պաշտամունքը փառաբանութեան երգով մը վերջացաւ:

Ս . Յ . Փ .

## Ո Ղ Ջ Ե Ր Թ

Յովհ. Եղբ. Պօյաճեանի և Պետրոս Եղբ. Գրիգորեանի մեկնումներուն առթիւ Սեպտ. 30-ին ողջերթի երեկոյ մը տեղի ունեցաւ ՓԱՆՈՒԷԼԻ մէջ:

Երգեցողութեան և փառաբանութեան ժամանակ տրուեցաւ, եղբայրներ զնահատական խօսքեր խօսուեցան, ոսկեղէն համարներ և նուէրներ տրուեցան անոնց ՓԱՆՈՒԷԼԻ կողմէն: Ապա, մեր եղբայրները իրենց վերջին երախտագիտական և քաջալերական խօսքերով յորդորեցին ներկաները որ յառաջ երթան Տէրով գործին մէջ:

Անկէ վերջ քոյրեր զովացուցիչ և կարկանդակ բաշխեցին ներկաներուն: Փառաբանութեան երգով վերջացաւ այս ժողովը:

Հետեւեալ առաւօտ Պօյաճեան Եղբ. Քանատա զնաց, և Հինգշաբթի օր ալ Պետրոսեան Իղբ. Ֆրանսա մեկնեցաւ:

Թող Տէրը առատօրէն օրհնէ զիրենք իրենց գործած երկիրներուն մէջ:

ԶԳԸ  
2010

### ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՒՔԸ

### ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՒՔԻՆ ՆԵՏ ՄԻ՛ ԽԱՂԱՐ



Ա.— Աստուծոյ Խօսքին հետ մի՛ խաղար որովհետեւ Աստուծոյ Խօսքը կրակ է... կ'այրէ քեզ... Երեմ : 5 · 14, 23 · 29 :

Բ.— Աստուծոյ Խօսքին հետ մի՛ խաղար, որովհետեւ Աստուծոյ Խօսքը երկսայրի սուրէն աւելի սուր է... քեզ կը կտրէ... Երբ · 4 · 12 :

Գ.— Աստուծոյ Խօսքին հետ մի՛ խաղար, որովհետեւ Աստուծոյ Խօսքը ժայռը կոտորող մուրճ է... քեզ կը ջախջախէ... Երեմ · 23 · 29 :

Մարդ լ՞ծնչպէս կրնայ խաղալ Աստուծոյ Խօսքին հետ.—

Ա.— Անոր չհաւատալով եւ Անոր կարեւորութիւն չտալով :

Բ.— Անոր չհնազանդելով, զԱ՛յն չզործադրելով :

Գ.— ԶԱ՛յն սխալ մեկնարանելով եւ Անոր այլարանական բացատրութիւններ տալով...

Դ.— ԶԱ՛յն մարդու խօսք անուանելով...

Ե.— Անոր տառական ներշնչումը մերժելով...

Զ.— Հին դիրք մը նկատելով եւ զԱ՛յն մէկ կողմ նետելով...

Է.— Աստուծոյ Խօսքը ծաղրելով... «Ո՞ւր մնաց Անոր խոսումը» բռնելով...

Ահա վերոյիշեալ Եօթը կէտերով է որ Աստուծոյ Խօսքին հետ խաղցած կ'ըլլանք :

Սիրելի ընթերցող, զգուշացիր Աստուծոյ Խօսքին հետ խաղալէն եւ վախցիր Անկէ... Հապա սիրէ եւ պատուէ զԱ՛յն, հաւատա Անոր ամէն մէկ բառին... որ Աստուծոյ Սուրբ Հոգիէն ներշնչուած է : Գիշեր ցորեկ կարդա Աստուծոյ Խօսքը... ու հնազանդէ Անոր ամէն մէկ պատուէրին... ու Ան քեզ պիտի օրհնէ, ու քու բոլոր գործերուդ մէջ յաջողութիւն պիտի դանես :

(Պատ) Ե. Ա. ԹՕՐՕ

ԶԳԸ  
2014



## ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

# ԻՐԱ ՍԵՆՔԻԻ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵՆԷՆ



Ասկէ հարիւր տարի առաջ Իրա Սէնքի ծնաւ արեւմտեան Փենսիլվանիոյ փոքրիկ քաղաքի մը մէջ: Հոն ձմեռը շատ ցուրտ կ'ընէր եւ դետնին վրայ առատ ձիւն կ'ըլլար:

Ձմեռուան ցուրտ դիշերններուն Սէնքիի հայրը հաստ փայտերէն կրակ կը պատրաստէր, որուն շուրջ բոլոր ընտանիքը հաւաքուելով՝ հոգեւոր երգեր կ'երգէին եւ յետոյ կը հանդչէին: Երբ Սէնքի մեծցաւ իր մանկութեան այդ հաճելի դիշերները կը սիրէր յիշել:

Սէնքիի ծնողքը եկեղեցի չէր երթար: Կիրակի առաւօտ մը իրենց զրացիներէն Մտտը Փրէյլըր իր ձեռքէն բռնելով Կիրակնօրեայ Դպրոց առաջնորդեց: Ան՝ հոն սորվեցաւ թէ Տէր Յիսուս իր մեղքերուն համար մեռաւ, օր մըն ալ զԱյն իրը իր Փրկիչը ընդունեց:

Սէնքին կը սիրէր եկեղեցին, իր սիրած բաներէն մէկը եկեղեցական երաժշտութիւնն էր: Այնքան կը սիրէր երգեցողութիւնը որ միշտ իր հետ կը կրէր իր երգարանը:

Օր մը իր հայրը ըսաւ. «Կը վախնամ թէ այս տղան բանի մը չձառայէ, (մարդ չըլլայ) որովհետեւ իր երգարանը արմուկին տակ առած առաւօտէն մինչեւ իրիկուն քաղաքին շուրջը կը դառնայ»:

Սակայն Սէնքին շատ արժէքաւոր մէկը դարձաւ, Տէր Յիսուսէն խնդրեց որ երաժշտութեան հանդէպ իր ունեցած տաղանդը դորձածուի: Ան սկսաւ եղանակներ յօրինել երգերու համար, որոնք սորվեցուց եկեղեցիին մէջ. Ամերիկայի ամենանշանաւոր երգահաններէն մէկը եղաւ: Տարիներ Մտտը Մուտիի հետ (19-րդ դարու համրածանօթ Աւետարանիչ) պտրտեցաւ եւ մասնաւոր հաւաքոյթներու եւ մինչեւ իսկ փողոցներու անկիւններուն մէջ երգեց:

Մտտը Սէնքի այնքան կը սիրէր Յիսուս Քրիստոսը որ երբ ունկնդիրներու առջև կը կենար ժողովուրդը ինքնաբերաբար կը փափաքէր երգել եւ օրհնել Տէրը:

## ՅՈՒՇԵՐ

(Շար. Թիւ 1-2-3-էն)

Չորս ու կէս տարեկան հասակիս հայրս զիս զպրոց զրկեց : Դպրոցը մեր Աւետարանչական Եկեղեցիին կը պատկանէր եւ հօրս տեսութեան ներկայ ըլլալով, Քրիստոնէական դաստիարակութեան շատ հոգ կը տարուէր : Մեր վարժուհիներն ալ նոյն եկեղեցիին անդամները ըլլալով, բարձր նկարագրի տէր անձեր էին եւ հաւատարիմ իրենց պաշտօնին :

Չորս տարիէն տեղւոյն ուսման շրջանը յաջողութեամբ վերջացուցի : Որմէ յետոյ հայրս Տարսնի գօլէճին տնօրէնին, Տր. Քրիսթիին դիմում ըրաւ, որպէսզի զիս զօլէճը ընդունի : Ան զրկեց որ, իրենց օրէնքին համեմատ, միայն տասներեւոյ տարեկանէն վեր եղողները կ'ընդունուին զօլէճը, բայց հօրս սիրոյն համար որպէս բացառութիւն զիս կ'ընդունի :

Այդ ամառը, երկրորդ անգամ ըլլալով, գացինք «ԵՐԷ ՊԱՔ-ԽԱՆ» ամառանոցը, այն ամառը, Պատուելի Խարլանպոսը մեզ այցելեց քանի մը օրով, եւ ես երկրորդ անգամ ըլլալով, անոր քարոզը լսեցի, որը առաջուան պէս մեծ ազդեցութիւն զործեց վրաս :

Առաջին քարոզը լսեցի Գարս Պաղարը—ի մէջ, ուր՝ ան խօսեցաւ Յիսուսի չարչարանքներու մասին : Ես այնքան յուզուած էի որ, գառնապէս լացի Յիսուսի կրած տառապանքներուն համար եւ շատ բարկացած էի զԱյն խաչողներուն վրայ :

Այս անգամ ան քարոզեց Երեմեայ 8. 22-րդ համարին վրայ : «Միթէ Գաղատազի մէջ բալասան չկա՞յ, հոն բժիշկ չկա՞յ, հապախչո՞ւ համար իմ ժողովուրդիս ազջիկը բժշկութիւն չգտաւ» :

Ես հիմազուան պէս կը յիշեմ անոր կրակոտ խօսքերը որոնք անոր սրտէն կ'ելլէին եւ սրտերուն կ'աղդէին ինչպէս նաեւ իմ մանկական սրտիս ազդեցին :

Նոյն ամառը մեր ընտանիքին առջեւ տեսնուեցայ նաեւ եղբայր Ա. Աէֆէրեանի հետ որը ինծի հետ խօսեցաւ փրկութեան մասին : Երբ ամառը վերջանալով, ուսման շրջանը մօտեցաւ հայրս զիս զրկեց Տարսն :

Առանայն Տարսոն, շոգեկառքով գացի : Ծոզեկառքին առաջին ճամբորդութիւնը մեծ նորութիւն էր ինծի համար : Պատուհանէն նայելով ապշեցայ ինչպէս ծառերը եւ հեռագրի սիւները ետ կ'երթային արագօրէն բայց յետոյ հասկցայ որ, ոչ թէ անոնք, այլ մեր շոգեկառքն էր որ, յառաջ կը սուրար : Կէսօրէն վերջ ժամը չորսին մօտ զօլէճին բակը մտայ : Փրօֆէսօր Սիմոն Խոճան զիս տեսնելով

Հարցուցեր էր թէ, «Ո՞վ է ան»: Ըսեր են. «Աշակերտ է»: «Հասցա անոր օրօրոցը ո՞ւր է?» Հարցուցեր է ժպտելով:

Մեր դասարանին մէջ եօթնասուն աշակերտներ կային, որոնցմէ էս ամենափոքրն էի, (ինը տարեկանի մօտ) երկրորդ փոքր աշակերտը, Յոյն տղայ մըն էր 15 տարեկան: Իսկ ամենամեծը 28 տարեկան երիտասարդ մէր, որ ուսման մէջ ամենատկարն էր, որուն ես շատ կը խղճայի եւ երբեմն ալ կ'օգնէի թուարանական հարցերը լուծելուն մէջ: Թէեւ աշակերտութեան մեծամասնութիւնը անդարձ անձեր էին, բայց Քրիստոնէական դպրոցի կանոններուն կը հնազանդէին: Կը ծխէին, կը խմէին, կը հայհոյէին, կուէլը, թատրոն եւ սինեմա յաճախէլը բոլորովին արգելուած էր: Բարեկամական եւ ընտանեկան մթնոլորտ մըն ալ կար դպրոցին մէջ:

Մտէն առաւօտ Աստուծոյ Խօսքը կը կարդացուէր, կարճ քարոզ մը կը տրուէր եւ աղօթքով կը փակուէր ժողովը: Որմէ յետոյ կը սկսէին դասաւանդութիւնները:

Մտէն առաւօտ (դասաւանդութենէն առաջ) աղօթքի պահ մը կ'ունենայինք, ուր՝ Աստուծոյ Խօսքին կարճ պատգամ մը կը տրուէր: Կիրակի օրերն ալ Աւետարանչական Եկեղեցւոյ ժողովներուն կը յաճախէինք, որոնք անշուշտ իրենց հոգեւոր եւ բարոյական ազդեցութիւնները կը ձգէին աշակերտներուն վրայ: Բացի ատկէ, մեծ ազդեցութիւն ունէին նաեւ ուսուցիչները, որոնք ամէնն ալ կրօնասէր անձեր էին եւ անոնց մէջ պատուելիներ ալ կային:

Նոյն տարին Տարսոնը այցելեց Պատուելի Խարլանպոսը եւ Աւետարանչական Եկեղեցւոյն մէջ արթնութեան ժողովներ տեղի ունեցան:

Ուրիշներուն շարքին մէջ ես ալ արթնացայ եւ մեծ եռանդով կը յաճախէի ժողովներուն ու կը ջանայի դասընկերներս ալ համոզել ժողովի երթալու: Արդ, շրջանի գօլէճին մէջ ալ յատուկ ժողովներ կազմակերպուեցան արթնութեան գործը յտնաջ տանելու նպատակաւ:

Պատուելի Խարլանպոսի քարոզները այնքան զօրաւոր կերպով կ'ազդէին վրաս որ, դրեթէ ամէն ժողովին մէջ համարձակ կ'աղօթէի եւ կարծելով որ փրկուած եմ, մեծապէս կ'ուրախանայի:

Ռաֆայել անուշով Յոյն դասընկեր մը ունէի որուն հետ շատ մտերմացանք, որուն հայրն ալ քարոզիչ էր եւ հօրս բարեկամը:

Ռաֆայելը ինձմէ մեծ էր տարիքով եւ խելացի տղայ մըն էր, բայց աշխարհային կեանք կ'ապրէր: Գիշեր մը ան հաց դողնալու փորձութիւնը կ'ունենայ, աշակերտ մը այդ տեսնելով կը մատնէ զայն Տր. Քրիսթիին, որմէ ետք դպրոցէն վճռուելու վճիռը կ'ըստանայ:

Երբ այս բանը յայտնի եղաւ դպրոցի բոլոր ուսուցչական կազմը եւ աշակերտութիւնը մեծ ցաւ զգացին եւ ջանացին ասոր առջեւ:

## Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ս

Մանկութիւնից Տէր Յիսուսի մասին լսել եւ նրան միշտ սիրել եմ, բայց փրկութեան մասին դադարաւոր չեմ ունեցել: Կեանքիս մէջ շատ դժուարութիւններ եմ ունեցել, բայց միշտ Տիրոջն եմ յուսացել եւ նա ինձ օգնել է:

13 տարի առաջ ամուսինս հիւանդացաւ մենք չքաւոր էինք, ինչ էլ որ ունէինք իր հիւանդութեան համար ծախսեցինք, երբ մահացաւ, երկու փոքր աղջիկներն էլ հետ մնացի անօղնական: Հենց առաջի օրից ծախսի չունէինք եւ շատ նեղութեան մէջ էինք: Ես շատ հողս էի անում թէ ինչպէս այս որբերի ապրուստը հողամ: Այսպէս հողսի եւ լացի մէջ էի մինչեւ ուշ գիշեր: Քնեցի, երազում մի ձայն լսեցի, որ ասաց. — Մի վախենայ, ես եմ որբերի եւ որբուայրիների Աստուածը... մի սարսուռ անցաւ իմ մէջս արթնցայ քնիցս, շատ ուրախ էի եւ բոլոր հոգսերս վերացուել էին: Առաւօտը պիտի երեկաներիս համար ուսելիք առնէի, բայց դրամ չունէի. կարծես մէկն ինձ ասաց, ձեռքդ մեկնիր եւ Աւետարանը վերցրու, երբ վերցրի եւ բաց արի միջումը 600 բիւլ դրամ կար: Թէ որտեղից էր ես երբեք չեմ

առնել: Նախ՝ Վեր. Սամուէլ Մեղոնեան (որ թէ ուսուցիչ էր, թէ բարձրադաստն ունէր) դնաց բարեխօսելու Տր. Քրիսթիէին եւ ներում խնդրելու, բայց մերժուեցաւ: Յետոյ միւս ուսուցիչները դացին, մերժուեցան: Վերջը բարձրագոյն կարգերը փորձեցին, բայց անոնք ալ մերժուեցան: Ուստի Ռաֆայելը յուսախար եղած, իր իրերը պատրաստեց ճամբայ ելլելու համար:

Շարաթ օր էր, անոր հետ նոյն սեղանին ետեւը նստած կը ճաշէինք: Ան՝ չափազանց տխուր էր եւ ամօթէն երեսը կախած լուռ կ'ուտէր իր կերակուրը: Տեսնելով սիրտս դուրսով լեցուեցաւ: Ճաշէն յետոյ մօտենալով անոր ցաւահցութեամբ ըսի.

«Ուրեմն կ'երթամ, Ռաֆայել»: «Այո», ըսաւ. «Ռաֆայել, դուն մեծ մեղք մը գործած ես», ըսի անոր, «բայց եթէ ապաշխարես, ես կ'երթամ Քրիսթիին քով ու կը խնդրեմ որ ան քեզի ներէ եւ չվճնոտէ դպրոցէն»: Ուսուցիչները, բարձր դասակարգի աշակերտները մերժեց, քե՞զ պիտի լսէ»: Ըսաւ ան յուսահատութեամբ: Եկտ'եր, ծունկի վրայ դանք, ու դուն ապաշխարէ, թող առաջ Աստուած ներէ քեզի, անկէ յետոյ կը յուսամ որ Տր. Քրիստին ալ պիտի ներէ, ըսի անոր եւ ան հնազանդեցաւ ու ծունկի վրայ գալով, Աստուծո՞ւմէ ներում խնդրեց, իր մեղքը խոստովանեցաւ, ես ալ աղօթեցի անոր համար ու մէկտեղ դացինք Քրիստիի դրասնեակը:

կարողացել հասկանալ: Շատ ուրախացայ եւ փառք տուի Աստուծոյ ասելով — Սա Քո զործն է: Ուրախութեամբ զնացի խանութ կրե-  
խաներիս համար ուտելիք զնեցի: Նրանից յետոյ Տէրը յաջողեց զոր-  
ծի անցայ ու իմ եւ երկու աղջիկներս կարիքները հողացի: Փառք  
Տիրոջը յաւիտեանս ամէն:

Երբեմն ժողովներ էի զնում, բայց փրկութեան հասկացողու-  
թիւնը չունէի, որ Աւետարանը կարգամ: Այսպէս շարունակուեց  
կեանքս մինչեւ 1963 թիւը, երբ մի օր քրոջս տղաների տունը զնա-  
ցի, Վահիգիէ թողամասի մէջ, տեսայ այնտեղ մի նոր ժողովարան է  
բացուել եւ Աւետարան են քարոզում. ուրախացայ: Սկսեցի շարու-  
նակ ժողովի գնալ եւ լսել. մի օր էլ քարոզիչը առաջի անդամների պէս  
պարզ խօսքերով փրկութեան Աւետարանը քարոզեց, ինձ վրայ շատ  
ազդեց եւ երբ վերջում ասեց ով կ'ուզի իր սիրտը բացի Յիսուսի ա-  
ռաջ, թող ձեռք բարձրացնի, մի քանի հոգի եւ ես ձեռք բարձրաց-  
րինք: Քարոզիչը աղօթեց, ես խոստովանեցի մեղքերս, հաւատացի եւ  
փրկուեցի: Սրտիս մէջ խաղաղութիւն եկաւ:

Նրանից մի քանի օր յետոյ խիստ յոյնած էի: Տնում ոչ ոք  
չկար, երեխաներս դուրս էին զնացել, ուղեցի մի քիչ հանդատանալ:  
Յանկարծ մի այնպիսի թուրութիւն եկաւ ինձ վրայ որ ամենեւին չէի  
կարողանում շարժուել, ինձ օդնող էլ չկար, ժողովարանում լսել էի,  
որ Յիսուսը բժշկում է հիւանդներին եւ աղատում է նեղուածներին:  
Պարզ հաւատքով խնդրեցի Յիսուսից, որ ինձ բժշկէր: Այսպէս աղօ-  
թեցի, Տէր Յիսուս Դու որ հիւանդներին բժշկում ես եւ նեղուած-  
ներին աղատում, խնդրում եմ ինձ էլ բժշկես եւ այս նեղութիւնից  
աղատես: Նոյն միջոցին մի լոյս ծագեց ինձ վրայ եւ հիւանդութիւնս  
միանգամից անհետացաւ, ես ինձ շատ թեթեւ զգացի, մինչեւ երե-  
խաներս տուն եկան եւ բոլորովին առողջ էի: Փառք Իր Սուրբ Անունս:

Մի օր էլ երբ քարոզիչը ասաց թէ, նրանք որ ապաշխարել են  
համաձայն Յիսուսի պատուէրի պիտի մկրտուեն, ես համաձայնուե-  
ցի եւ մի քանի օր յետոյ Մաջիգիէի եկեղեցում մկրտուեցի, եւ իմ  
հին մարդը թաղեցի ջրի տակ, նորոգուեցի եւ աւելի մեծ ուրախու-  
թիւն եկաւ սրտիս մէջ: Այդ օրը շատ ուրախ էի, եւ զիշերն էլ նոյն  
ուրախութիւնով քնեցի, երազում տեսայ ես մի ճանապարհով զնում  
եմ մէկ էլ հեռուից մի շատ գեղեցիկ այգի երեւաց, կանգնեցի, սկսեցի  
հիացմունքով նայել, տեսայ Յիսուսին, որ ինձ ասաց ուղիղ ճանա-  
պարհովը գնա:

Այն օրուանից ուրախութիւնով կեանքս շարունակում եմ, վրա-  
տահելով բարի Աստուծուն, որ ամէն բան բարի է անում: Յաւես  
Փառք նրան. Ամէն:

Թեհեբան

ՇԱՀՕՔՐԱՄ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ

**Ծ Ե Ր Ս Ի Մ Ո Ն Ը**

Հովիւ մը կանչեց իր ժամկոչը ու ըսաւ. «Ամէն օր կէսօրուան ատեն կը նշմարեմ երեցական պատուհանէն որ աղքատ դատարկաշրջիկ մը, աղոտոտ հանդերձներով, կը մտնէ եկեղեցի եւ շատ կարճ ժամանակ մը ետք դուրս կ'ելլէ ու կը մեկնի հանդարտ քայլերով... Ուշադրութիւն ըրէ, չըլլայ որ ամէն անգամ հետը բան մը տանի»:

Ժամկոչը ուշադրութիւն ըրաւ եւ ճշդեց թէ իրաւ ամէն օր կէսօրուան ատեն, նոյն մուրացկանը կը մտնէր եկեղեցի, կը յառաջանար մինչեւ խորանը եւ հազիւ մի քանի երկվայրկեան կայնելէ յետոյ՝ եկեղեցիէն կ'ելլէր:

Անգամ մը ժամկոչը կեցուց զայն. «Ի՞նչ դորձ ունիս հոս բարեկամ», զոչեց խիստ ձայնով: «Կուգամ աղօթելու», պատասխանեց ծերը առանց վրդովելու: «Աղօթելու», զարմացաւ ժամկոչը, այսօր քան կարճ ժամանակի մէջ ի՞նչպէս կ'աղօթես, հազիւ մտած՝ կ'ելլես եկեղեցիէն»: «Այո», շարունակեց ծեր Սիմոնը, «ես երկար աղօթք չեմ գիտեր, խաչին առջեւ կը կայնիմ ու կ'ըսեմ՝ «ՅԻՍՈՒՍ, ՍԻՄՈՆՆ Է», եւ կը վերադառնամ: Ժամկոչը ազդուած՝ ձեցեց զայն:

Մի քանի օր ետք՝ արկածի մը հանդիպեցաւ ծեր Սիմոնը, ու ոտքը ջախջախուած հիւանդանոց փոխադրուեցաւ: Հիւանդանոցի իր սենեակին միւս վերաւորները շատ դժգոհ ու պահանջկոտ էին: Հիւանդապահները կը տառապէին այս տրտնջող լեզուներէն: Մի քանի օրէն ամէն գանդատ դազրեցաւ, դժգոհանքը տեղի տուաւ ժպիտներու, հիւանդապահները կը դարմանային: Այս ի՞նչ եղաւ, ի՞նչ փոփոխութիւն, հիւանդները ծեր Սիմոնը ցուցնելով պատասխանեցին. «Սիմոնը մեզմէ շատ աւելի կը տանջուի, բայց միշտ ժպտաղէմ ու դոհ է: Իրմէ ստրվեցանք տառապանքներու մէջ ուրախ ըլլալ»:

Հիւանդապահուհի մը հարցուց. «Սիմոն, ի՞նչպէս կրնաս միշտ ուրախ ըլլալ հակառակ ցաւերուդ, դուն որ որեւէ մէկին ալ չունիս աշխարհի վրայ»:

«Ի՞նչպէս ուրախ չըլլամ, քանի որ բարեկամս ամէն օր ինձի այցելութեան կուգայ»: «Բայց մարդ չի դար քեզ տեսնելու», ըսաւ հիւանդապահուհին զարմացած: Սիմոն լուսաւորուած դէմքով շարունակեց. «Ամէն օր կէսօրուան ատեն կուգայ բարեկամս, կը կայնի անկողնիս ոտքը ու կ'ըսէ. «ՍԻՄՈՆ, ՅԻՍՈՒՍՆ Է»:

«Բանբեր»

ՀՈՎԻԻ

# Մ Օ Տ Է Մ Ա Հ Ը

Մարկ. Թ. 43, 45, 47: Բ. Կորն. Զ. 2: Գաղատ. Գ. 13: Եբր.  
Ա. 3: Ա. Պետ. Բ. 24: Յայտ. Ա. 5:

Ո՛վ անմահ հոգի, դարձիր Յիսուսի,  
Օրէ օր մահն կը մօտենայ քեզի,  
յաւիտեանական Փրկչիդ հըրաւէր,  
Յամառութիւնով ալ դու մի՛ մերժեր:

Շարունակ սրտիդ դըրան զարնելով,  
Կ'աղաչէ քեզի մեղմ անուշ ձայնով.  
«Ո՛վ անմահ հոգի, զիս ներս ընդունէ,  
Որ հոգիդ ինձմով փրկութիւն զըտնէ»:

Բայց յիմարաբար կը հակառակիս,  
Որ մեղքերովդ ամէն օր ապրիս,  
Զես ուզեր մեղքէն հրաժարիլ շուտով,  
Զի յարած է քեզ սուտ հանոյքներով:

Սակայն յիշէ՛ քէ, կեանքը շատ կարն է,  
Մահը պատրաստ է քեզ ամէն րոպէ:  
Կեանքիդ քեղն յանկարծ պիտի կըտըրուի,  
Քեզ բըժըշկութիւն պիտ' չըզըտնուի:

Խորիէ քէ դըժոխք մը կայ մընայուն,  
Անտարակոյս հոն պիտի երթաս դուն.  
Որուն կըբակը երբեք չըմարիր,  
Եւ անոր որդը բընաւ չըմեռնիր:

Ահեղ վընիւղը կնքուած է արդէն,  
Զես կրնար փախչիլ անոյս դըժոխքէն,  
Սատանային ու դեւերուն հետ յար,  
Պիտի տանջըլիս դարեր անհամար:

Յանախ լըսած ես այս ուշմարտութիւն,  
Ինչո՞ւ ապագադ չես մըտածեր դուն.  
Հոն նետուելէդ վերջ՝ շատ պիտի գոջաս,  
Գարձի չըգալուդ համար պիտ' ողբաս:

Վերջին զրդջումը՝ ալ օգուտ չունի,  
Պիտ՝ աղաղակես, բայց պիտ՝ չըլըսուի·  
Խճնչ սրտանըմլիկ անյոյս սպագայ,  
Երբ դըժոխք նետուիս, ալ ելլել չըկայ :

Ուստի քանի որ դեռ պատեհութիւն,  
Ունիս սպրեւու աշխարհի վրայ դուն,  
Դարձիր քու Փրկչիդ, ալ մի՛ ուշանար,  
Թերեւքս վաղն ուշ կ'ըլլայքեզ համար :

Գողգոթա զընաց ան յօժար կամքով,  
Քու անէժֆըդ իր վըրայ առնելով·  
Դըժոխքի պատիժն ջընջեց քեզ համար,  
Տանջուելով խաչին վըրայ չարաչար :

Բոլոր մեղքերըդ իր Սուրբ արիւնով,  
Լըւաց սրբեց քեզ արդարացնելով·  
Ծախու առնելով քեզ իր մահով ինք,  
Փոխադրեց սիրովն, դըժոխքէն երկինք :

Ուստի ո՛վ անմահ հոգի քանկազին,  
Մի՛ մերժեր շընորհքն հիանայի Փրկչին·  
Իր մեծ փրկութիւնն ընդունէ՛ շուտով,  
Փառք տալով իրեն, շնորհակալ սրտով :

Ինչո՞ւ կորսըւիս յախտեմապէս,  
Քանի որ փրկած է Տէր Յիսուս քեզ·  
Ան քեզ համար փառք մը պատրաստած է,  
Ընդունէ՛ գինք, որ չառնըլի քեզմէ :

Երանելի պիտ՝ ըլլաս այն ատեն,  
Երբ ամբողջովին նըւիրուիս իրեն·  
Ուրախ պիտ՝ ըլլաս կեանքիդ մէջ բոլոր,  
Ապագայ կեանքիդ համար փառաւոր :

# ՄԵՂԱԽՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՍ

(Շարունակուած նախորդ քիւէն)

Ո՛վ անապաշխար անմահ հոգի այս առթիւ քեզի ըսելիք քանի մը խօսք ունիմ մտիկ ըրէ ու պիտի չզղջաս, ինչպէս որ ես զզջացած չեմ հապա աւելի ուրախ եւ երջանիկ պիտի ըլլաս ուստի քանի որ այսօր այս կենաց խօսքերը կը լսես քու սիրտը մի խտացներ, չըլլայ որ դուն քու խտութիւնովդ ու անզեղ սրտովդ քու անձիդ բարկութիւն դիզես: Հռովմ. 2. 5: Եթէ մտիկ ընել չուզես դուն պիտի ըլլաս բուն քու անձիդ թըշնամին, սա որոշ գիտցիր, չես կրնար ուրիշ որեւէ մէկը պատասխանատու բռնել ինքզինքդ արդարացնելու համար որովհետեւ ամէն մարդ մեղք գործած է իր անձին համար հաշիւ պիտի տայ, իսկ դուն ալ քու անձիդ համար հաշիւ պիտի տաս: Հռ. 14. 12: Գարձեալ դրուած է թէ «Մարդու նայել չըլլար»: Ա. Թագ. 16. 7: Տէրը այսպէս կ'ըսէ. «Անիծեալ ըլլայ այն մարդը որ մարդու կ'ապաւինի ու մարմինը իրեն բազուկ կ'ընէ ու իր սիրտը Տէրոջմէ կը խոտորի»: Երեմ. 17. 5: Տէրը այսպէս կ'ըսէ. «Ես կեցէք մարդէն որուն չունչը իր ոնդացը մէջն է վասնզի ի՞նչ բանի մէջ հաստատ կը համարուի ան»: Ես. 2. 22: Ուրեմն դուն զգուշացիր մարդոց նայելէ: Մի միայն մէկ եզակի

անձ կայ որուն նայելու ենք ան ալ առանց մեղքի Տէր Յիսուս Քրիստոսը Աստուծոյ Գառն է որ աշխարհի ասպարէզ կարգաց ըսելով. «Ձեզմէ ո՞վ կրնայ Ձիս յանդիմանել մեղքի համար իսկ թէ որ ճշմարտութիւն կը խօսիմ ինչո՞ւ չէք հաւատար. Ես եմ դուռը, ճամբան, ճշմարտութիւնը ու կեանքը ան որ ինձմէ ներս կը մտնէ պիտի փրկուի. ճշմարտ ճշմարտ կ'ընեմ ձեզի ան որ ինձի կը հաւատայ յաւիտենական կեանք ունի: Յովհ. 8. 46: 10. 9: 14. 6: 6. 47: Ուստի, դուն հաւատայ Տէր Յիսուս Քրիստոսին ու պիտի փրկուի: Գործք. 16. 31: Տէրը Ես եմ, Ես եմ, ինձմէ ուրիշ Փրկիչ չկայ, նայէ ինչ կ'ըսէ այն մեծ մարդարէն Եսայի «Ո՞վ երկրի բոլոր ծայրերը ինձի նայեցէք որ փըրկուիք»: Ես. 43. 11: 45. 22: Ուստի հիմա քու աչքերդ դէպի Գողգոթայի սարը վերցուր հոն պիտի տեսնես Խաչեալ Յիսուսը որ քու մեղքերուդ համար դուրսը փուշէ պսակ դրած եւ ձեռքերը տարածած արիւնլուայ վիճակի մէջ քեզ մոռցած չըլլալով եւ ազաչելով քեզի կ'ըսէ. «Ո՞վ մեղաւոր անմահ հոգի, եկուր ինձի, քեզ իմ արիւնովս կը լըւամ ու քու մեղքերէդ ազատելով քեզի յաւիտենական կեանք կուտամ ինչու որ իմ արեանս

մէջ մաքրող մեծ զօրութիւն կայ (ևւ ալ քու մեղքերդ պիտի չլիւզեմ» : Ես . 43 . 25) : Ուստի այսօր այս հրաւելքը մի մերժեր եթէ մերժելու ըլլաս պիտի դայ օր մը որ դուն ալ իրեն պիտի աղաչես այն ատեն ինքն ալ քեղ մերժելով պիտի ըսէ քովէս մէկդի դնա, ինչու որ իմ խրատս մերժեցիր ու խօսքս ալ անարգեցիր, այս յանդիմանութիւնը չլսելու համար հպարտութենէդ խոնարհէ եւ ընդունէ այսօր այս հրաւելքը որ կ'ըսէ . «Ահա հիմա է ընդունելի ժամանակը ահա հիմա է փրկութեան օրը» : 2 Կորն . 6 . 2 : Վաղուան օրը շատ ուշ կ'ըրնայ ըլլալ քանի որ մեր ժամանակները եւ մեր շունչը Տէրոջը ձեռքին մէջ են . Յոր կ'ըսէ . «Ամէն ապրողին անձը եւ բոլոր մարդկային մարմնոյ հողին Անոր ձեռքն է» : Յոր 12 . 10 : Բաց Աստուածաշունչը եւ կարգա Սաղմ . 31 . 15 : Մարդ . Դան . 5 . 23 համարները, «Վաղուան համար մի պարծիր քանզի չես գիտեր թէ օրը ինչ պիտի ծնանի վաղուան օրը քուզի չէ եւ ոչ ալ ժամանակը Սատանային ձեռքին մէջ է որ մարդիկ խաբելով եւ համոզելով դէպի դժոխք կը տանի ըսելով՝ այսօր չէ, հապա վաղը, գեո երիտասարդ ես աշխարհը վայլէ, շատ ժամանակ ունիս ապաշխարելու եւ ըսեմ քեզի այդ յետաձգելու խորհուրդն ալ խորամանկ օձ Սատանայէն է, եթէ Տէրոջը խօսքերուն ու իմ ալ զըրութեանս չես հաւատար գնա

յերեզմանատուն եւ հոն պիտի տեսնես շատ մը անմեղ մանուկներու ու պատանիներու շիրիմները որոնք տակաւին կոկոն վիճակի մէջ եւ չբացուած վարդի նման թառամած ըլլալով սեւ ու ցուրտ հողին յանձնուած են եւ նոյնպէս քեզի նման շատ մը երիտասարդներուն շիրիմնաքարերուն վրայի գրութիւնները կարդայ, պիտի տեսնես որ ծաղիկ հասկնուն մէջ մահուան անդութ մանդաղը հնձած է եւ սեւ հողին մէջ պոռկեցուցած է այն ատեն պիտի հասկնաս Սատանային ստախօս եւ խաբեայ ըլլալը, ահա քեզի իրականութիւնը եւ անվիճելի փաստը . ուրեմն ճշմարիտը եղող ճշմարիտին խօսքերուն հաւատա ու ան ճշմարտութիւնը քեղ պիտի ապատէ : Յովհ . 8 . 32 : Ո՛վ մեղաւոր բարեկամս, ինչպէս որ մեր նախամայրը Եւան խաբուեցաւ եւ մեղքի մէջ ինկաւ, եթէ դուն ալ խաբուելու ըլլաս քու ալ աչքերդ դժոխքին մէջ բանալ պիտի տայ եւ քեզ կաթիլ մը ջուրի կարօտ պիտի ընէ եւ ան ալ ձեռքդ պիտի չանցնի ինչպէս որ ասկէ առաջ շատ մը ինքնաբերական, հարուստներ, զիտուններ, իմաստուններ, բարեգործ եւ բարոյակամի տէր մարդիկ, այս խորամանկ օձ Սատանայէն խաբուելով աչքերնին դժոխքին մէջ բացին եւ կաթիլ մը ջուրի կարօտ եղան, բայց աւաղ որ ան ալ ձեռքերնին չանցաւ դարձեալ որոնք որ եւս կը խաբուին նոյն

վիճակին պիտի ենթարկուին :  
Ղուկ. 16. 24 : Ուրեմն զգուշա-  
ցիւր, դուն մի ըլլար այդ խար-  
տոյներուն կարգէն, հապա եղիք  
այն մեծ բազմութեան կարգէն  
որ մէկը չէր կրնար համբել, ու-  
րոնք Յիսուսի անուանը հաւա-  
տացին ու Անոր անրիժ ու անդին  
արիւնովը իրենց մեղքերէն լը-  
ւացուեցան, մաքրուեցան ու  
ձիւնէն աւելի ճերմակ եղան ու  
օգտակար եղան նախ իրենց ան-  
ձին, յետոյ եկեղեցիին ու ազ-  
գութեան որոնց մէջ կային Ս.  
Գրիգոր Լուսաւորիչ, որ հայ  
ազգութիւնը լուսաւորեց անոր  
ճշմարիտ ճամբան ցոյց տալով,  
մեծ գործեր կատարող Մեծն  
Ներսէս, Ս. Ներսէս Ենորհալին  
որ առաքելական եկեղեցւոյ հո-  
ղեշունչ երգերը գրեց, Ս. Սա-  
հակ, Ս. Մեսրոպ Մաշտոց որոնք  
Աստուածաշունչ Մատենը հայ  
մայրենի լեզուին թարգմանելով  
ազգութեան մեծ ծառայութիւն  
մատուցին, Ս. Գրիգոր Նարե-  
կացին, որ հողեշունչ ազօթա-  
մատենը գրեց որ այսօր քանի  
մը լեզուներու թարգմանուած է,  
Ղեւոնդ Երեցը որ Աւարայրի  
պատերազմին մէջ խաչը ի ձե-  
ռին՝ Քաջն Վարդան Մամիկոն-  
եան զօրավարին հողեշունչ ազօ-  
թակիցը եղաւ : Քաջն Վարդան  
Զօրավարը որ 451 թուականնե-  
րուն էր որ առաջին կրօնական  
ճակատամարտը ըրաւ պարսից  
Յազկերտ թագաւորին դէմ, թէ-  
պէտ մեռաւ մարմնաւորապէս  
բայց հողեւորապէս յազթա-

նակը շահեցաւ եւ մինչեւ այս-  
օր կը խօսի մեղի ըսելով Յի-  
սուս Քրիստոսի հաւատացէք ու  
Անոր խաչանիչ դրօշը միշտ վեր  
բարձրացուցէք եւ հետեւեցէք Ա-  
նոր ճշմարիտ ճամբայէն որ դուք  
ալ արժանանաք երկնից արքա-  
յութեան, Աշխէն, Խոսրովա-  
զուղթ, Սանդուխտ եւ Սրբուհի  
կոյսերը նաեւ օտարներէն Թօրի,  
Մուտի, Սփրճըն, ձօրձ Միւլլըր,  
Օգոստիանոս եւ եթէ կը հաճիս  
ձեռքդ առ մեծ գիրքերուն ամե-  
նամեծ Գիրքը՝ Աստուածաշունչ  
Մատենը եւ կարգայ թուղթ առ  
Երբայեցիս 11-րդ գլուխը հոն  
պիտի գտնես ուրիշ սուրբ հե-  
րոսներու անուններու ցանկը,  
որոնց անունները պատմութեան  
էջերէն են Կենաց Գիրքին մէջէն  
անջնջելի պիտի մնան :

Ուրեմն՝ եկո՛ւր, այսօր Խաչ-  
եալին յանձնուէ, որ քու ալ ա-  
նունդ Կենաց Գիրքին մէջ գրուի  
եւ երկինքի մէջ մեծ ուրախու-  
թիւն ըլլայ : Ղուկ. 15. 10 : Ու-  
րոշումդ այս վայրկեանին տուր,  
զիտնալով որ յաջորդ վայրկեա-  
նըն ալ քուկդ չէ, վերջին զղջու-  
մը օդուտ մը պիտի չընէ, ինչ-  
պէս որ Քրանացի անհաւատ  
Վօլթէն մեծ զբաղէտը իր մահ-  
ւան վերջին վայրկեաններուն  
մէջ ըսաւ. «Միայն հինգ վայր-  
կեան», բայց աւաղ պատեհու-  
թիւնը անցած էր եւ այսօր կա-  
թիլ մը ջուրի կարօտ է : Ես ալ  
որպէս Տէրօջը մէկ անպիտան եւ  
անարժան զաւակը քեզ սիրելուս  
համար Քրիստոսի կողմանէ՝

## 1500 ՀԱՐՑՈՒՄՆԵՐ (ՇԱՐ.)

219. Լրացուր. «...անհաստատ է իր բոլոր ճամբաներուն մէջ»:

220. Մարաց եւ Պարսից օրէնքը ի՞նչպէս էր:

221. Ինչո՞ւ համար Քրիստոս Ալֆա եւ Օմեղա է:

222. Ի՞նչ էր խորանին եղջիւրներուն պաշտօնն ու նշանա-

կութիւնը:

223. Ո՞վ ըսաւ. «Քրիստոսի հետ խաչը ելայ...»:

224. Սուրբ Գրքին մէջ ո՞ր տեղ ծոյլին մասին կենդանի նկարագրութիւն կայ:

225. Լրացուր. «Այս խօսքը հաւատարիմ է...»:

226. Քրիստոսի համբառնալէն ետքը քանի՞ աշակերտներ

կային:

227. Ո՞ր աշակերտը Յուդայի տեղ ընտրուեցաւ:

228. Լրացուր. «...թէ որ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են... եւ եթէ որդան կարմիրի նման են...»:

229. Ո՞ր մարդարէն շատ անգամ «որդի մարդոյ» կոչուած է:

230. Ո՞ր զօրաւոր մարդը իր նիդակը 300 մարդոց վրայ վերցուց եւ մէկէն դանոնք մեռցուց:

231. Լրացուր. «Հապա մենք ինչպէ՞ս պիտի ազատենք թէ որ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութենէ մը, որ...»:

232. Որո՞նք էին մարդարէից որդիները:

233. Դանիէլ եւ իր ընկերները թագաւորին ազնիւ կերակուրին ու դինիին տեղ ի՞նչ ստացան:

234. Լրացուր. «Բայց բարի գործելէն չձանձրանանք, քանզի...»:

կ'աղաչեմ քեզի հաշտուէ Աստուծոյ հետ. Բ. Կորն. 5. 20:

Որպէսզի ամբողջ յաւիտենականութիւնը շահիս, հիմա քանի որ կեանքը ու մահը առջեւդ դրի, ուրեմն՝ կեանքը ընտրէ որ ապրիս դուն եւ քու սերունդդ: Բ. Օրին. 30. 19: Այսուհետեւ ես քու արիւնէդ անպարտ եմ, մի-

այն կ'աղօթեմ որ Տէրը համոզէ քեզ, ինչպէս որ գրուած է. «Զօրութեամբ չէ եւ ուժով չէ հապա իմ Հոգիովս» կ'ըսէ Զօրաց Տէրը: Զաք. 4. 6:

ՍԱՐԳԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆՅԱՆ

18 Դեկտ. 1965

Հիւս. Ամերիկա

235. Ո՞վ բազմատեղ Իսրայէլացիները ծակոտ դուրերու հետ :

236. Որո՞նք էին այն տղաքը, որոնց պատմուճանները մասնաւորապէս յիշուած են :

237. Նոր Կտակարանին Ասիան ո՞րն է :

238. Ինչո՞ւ համար Թուոց զիրքը այդպէս կոչուած է :

239. Որո՞նք էին մեծ մարդարէները :

240. Իսրայէլացիք ո՞ր քաղաքէն լրտեսներ զբկեցին :

241. Ո՞ր գրքին մէջ կ'ըսէ թէ ժողովուրդը դործելու սերտ ունէր :

242. Սբ. Գրքին մէջ ո՞ւր է այս հրամանը. «Մարդը պիտի ձգէ իր հայրը ու մայրը, եւ իր կնոջ պիտի յարի» :

243. Յուդայի ո՞ր բարի թագաւորը Յսայիի հետ զործեց :

244. Սուրբ Գրքին մէջ ո՞ւր լման տեղեկութիւն տրուած է երկինքի մասին :

245. Լրացուր Դաւիթի աղօթքը. «Բերնիս խօսքերը ու...» :

246. Սուրբ Գրքին մէջ ամենակարճ համարը յիշէ եւ տեղը գրէ :

247. Իմաստունները ի՞նչ նուէր տարին Յիսուսի :

248. Ո՞ր ժամանակի մէջ ըսուեցաւ թէ Երկրի մէջ հսկաներ կային :

249. Ի՞նչ էին Բաղաղ եւ Ատարովդ :

250. Յիսուսի կեանքին մէջ ի՞նչ երկու իրաւաց օրեր յիշուած են :

251. Ի՞նչ էր Մովսէսի քրոջ անունը :

252. Ո՞ր երեք անձեր քաղաքի պարիսպին վրայէն թող տրուեցան :

253. Ո՞ր աշակերտներու արհեստին մասին խօսուած է :

254. Որո՞ւ որդին Աստուծոյ անուանը հայհոյեց, անիծեց եւ քարկոծուեցաւ :

255. Յիշէ Նոյի որդիներուն անունները :

256. Ո՞ր թագաւորը Բեթլէհէմը եւ Քերթընը շինեց :

257. Ո՞ր թագաւորը ամէն ուղողը կ'օրհնէր :

258. Ո՞վ մարդարէացաւ թէ մարդիկ իրենց սուրերը խփեր, եւ իրենց նիզակները յօտոցներ պիտի շինեն :

259. Ո՞ր ազգին վրայ պարիսպ մը ինկաւ եւ 27000 մարդ մեռաւ :

260. Չերեզոսի 2 որդիներուն անունները յիշէ :

262. Ինչէ՞ն գիտենք թէ Պետրոս ամուսնացած էր :

263. Սաղմոսի մէջ ո՞ր համարը սուրբերու մէջ մահուան պատուականութեանը մասին կը խօսի :
264. Ո՞վ ըսաւ Յիսուսի. «Եթէ ուզես, կրնաս զիս մաքրել» :
265. Եղիպտոս ի՞նչ կասկեցութիւն ունի Յիսուսի պատմութեան հետ :
266. Նոյի տապանին չափը ո՞րչափ էր :
267. Ո՞վ ինքզինքը «Տէրոջը աղախինը» կոչեց :
268. Ո՞վ էր Ուլի :
269. Ո՞ւր յիշուած է. «Արեւին տակ նոր բան մը չկայ» :
270. Ո՞վ Տէրոջը խորանին մէջ սպաննուեցաւ սեղանին եղջիւրները բռնելով հանդերձ :
271. Ո՞ր մարդարէն մարդարէացաւ ըսելով. «Ձեր տղաքը եւ ձեր աղջիկները պիտի մարդարէանան» :
272. Ի՞նչ հրաշագործութեան պատճառ եղաւ Եղիա մարդարէի վերարկուն :
273. Ո՞վ հարցուց. «Նազարէթէ կարելի՞ է որ աղէկ բան մը ըլլայ» :
274. Ո՞ր մարդարէին հրամայուեցաւ որ զբքի մը տոմսը ուտէ :
275. Ո՞վ Երուսաղէմը զբուեց եւ իրեն մայրաքաղաք ըրաւ :
276. Ո՞ր թագաւորը երազ մը տեսաւ եւ իմաստուններէն իմաստը հարցուց :
277. Ո՞ւր էր Դանիէլ երբ Սեղբաք, Միսաք եւ Արեղնագոլ կրակը ձուեցան :
278. Զաքարիա ի՞նչ զուշակեց երբ Երուսաղէմի եւ Դաւիթի տանը մեղքի պղծութեան համար բացուած աղբիւրի մը մասին մարդարէացաւ :
279. Յովնան ո՞ւր երթալ ուզեց, երբ իր պարտականութեան կը փախչէր, եւ ո՞ր նաւահանգիստէն ճամբայ կ'ըլլաւ :
280. Ո՞վ էր Համան :
281. Փոքր մարդարէներուն անունները զրէ :
282. Ո՞ւր գրուած է հետեւեալ օրհնութիւնը, «Նեղութեան օրը Տէրոջը պատասխանէ՛ք զիկ» :
283. Շարաթ օրուան ճամբորդութեան տեւողութիւնը ո՞րքան էր :
284. Ո՞ր երեք մեծ մարդիկ Քերրոնի մէջ ապրեցան :
285. Աստուածաշունչին ո՞ր Գիրքը ամէնէն շատ ու երկար գլուխներ ունի :
286. Ո՞վ ըսաւ. «Սօսէ՛ Տէր, քանզի քու ծառադ մտիկ կ'ընէ» :
287. Ո՞ւր գրուած է. «Այն ատեն սկսուեցաւ Տէրոջը անունը կանչելը» :

(Շարունակելի)

գլխի շինարար Փրոֆ. Գրար.



FL0339420

[~~Հ~~ՀԻՆ]

[10]

Պոպ  
2014



Համագումարին ներկայ եղող երիտասարդ երիտասարդուհիներ

Տէրը օգնութեամբ այս տարի ևս Աւետ. Կեղրոնի երիտասարդ-երիտասարդուհիները ունեցան իրենց Համագումարը, ուր՝ Տէրը ներկայութիւնը վայելեցին և օրհնուեցան :

Պատգամ բերողներն էին՝

- Վեր. ԼՈՒՏԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
- Եղբայր ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ
- Պատ. ՆՇԱՆ ՈՒԼՍՇԵԱՆ
- Պատ. ՀԱՊԻՊ ԱԼԱՃԱՃԻ

Կ Ա Ր Ճ Լ ՈՒՐ Ե Ր

Տէրը՝ մեր աւետարանիչ Տօբթօրեան եղբոր մանչ զաւակ մը ևս շնորհեց, որուն անունը Փիթրը ձան կոչեցին :

Ամանոս թաղին մէջ տասը օր է ի վեր աշխնութեան ժողովները կը շարունակուին մեծ վրանին մէջ, Տէրը մեծապէս կ'օրհնէ, ամէն օր վկայութիւններ կ'ըլլան, շատեր Տէրոջ կը յանձնուին. Փառք Իր Սր. Անուան :

\* \* \*

Արաբերէն Աւետարանիչի տպագրութեան համար, Աւետարանիչի խմբագրութիւնը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ Մարիամ վրժ. Պալօեանի սրտարուխ նուէրին համար :

Թող Տէրը առատօրէն վարձատրէ գինքը :